

թեամբ զարդարեալ... անն Աստուծոյ Յա- կոր վարդապետի Դրիմեցոյ ասացեալ յաղագս ազգականութեան: «Գիտելի է զի ազգակա- նութիւն...»:

42. Թղ. 205ա. Հարցումն ուսումնասի- րաց եւ պատասխանիք սրբոց վարդապետաց: «Քանի՞ են գործք առաջին աւուրն: Պր. Արար Աստուած գհրեղէն երկինք...»:

43. Թղ. 213ա. Հարցմունք Ս. Գրիգորի Լուսաւորչին եւ պատասխանի հրեշտակա- պետին վասն հոգոց արդարոց եւ մեղաւոր- րաց: Սուրբն Գրիգոր Լուսաւորչին մեր եմուտ ի սենեակն յեկեղեցոյն...»:

44. Թղ. 223բ—226բ. (տարբեր գրիչ, նոտագիր, առանց խորագրի). «Առաջին սրբութիւն մարդոյն խոստովանութիւն է...»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ.

1. Թղ. 212բ. Փառք ամենասուրբ երրորդութեան հօր եւ որդոյ եւ հօգոյն սրբոց այժմ եւ միշտ եւ ան- զբաւ յաւիտեանս ամէն: Կանոնական սահմանադրու- թեանց զլրումն ուղղաճեմ հաւատոցն, զոր ի հօգոյն սրբոց ընկալեալ հարցն եւ հայրատեալացն յարդարեցին մեզ ճանապարհ կենաց, առ լուսաճեմ կենան օթէվա- նիւ ըրորեց մարդկան կազմեցին զեզ կենաց համարէն վերաւորեցս մեհօք: Չոր մեծաւ ցանկութեամբ սի- բեցեալ սեռն սիրով, սրտի մտօք զիժեկարանս զայս հո- ղոց, ես անարժանս եւ անպիտանս ամենայնիւ Մեղիք- շայ որդոյ Մուրատ չէլեպիլին գրել տուի իմ հալալ ըն- շեց ի վայելումն անձին իմոյ եւ որդոյ իմոյ եւ յիշա- ատկ ծնողաց իմոց. ով որ կարդայ եւ օգտի ի սմանէ. յիշեալիք զվերոյ գրեալ զՄէլեքան, եւ զծնողս իւր, զհօգեւոր եւ զմարմնաւոր եւ զամենայն յազգայինս, զկենդանին եւ զնշնեցեալսն, ամէն: Արդ գրեցաւ սոց ի թվականն Հայոց ՌԿ եւ յամենան Մարտի Լ. աւր- շարաթ. ի ձեռն թերաւարժ եւ յաքնամեղ Յակոբ սղա- ւորին եղև սկիզբն եւ աւարտումն. մաղթեցէք վասն իմ, ով հանդիպողք, առ Տէր եւ յիշեցէք ի բարին եւ զուք յիշեալ լիջէք յարքայութեանն Աստուծոյ:

2. Թղ. 223ա. Գրեցաւ թղ. ՌԿԱ. Ապրիլ ամսոյն իթ աւրն Դշի. Որ սղորմի զբշի զրոցս անարժան եւ անպիտան մեղաւոր ծառայիս Աստուծոյ սուտանուն Յակոբ կրօնաւորիս, աղաչեմ զձեզ մեղաց իմոց եւ անցանցս թողութիւն խնդրեցէք ի Տեառնէ եւ ծնօ- ղացս եւ մեր ուսուցանողացն Աստուած սղորմի սաս- ցէք. եւ ինքն որ առատն է ի տուրս բարեաց, սղոր- մեացի ձեզ եւ մեզ, ամէն, Հայր:

3. Գանդրաց ժողովոյն կանոնաց ետեւը (Թղ. 45բ). Ազաչեմք զսուրբ ընթերցողքս անմեղադիր լինել սզալանաց գրիս եւ անարճեստութեանս, զի կար մեր այս էր. ողջ լերուք:

4. Առջեւի մաղաղաթեաց պահպանակին երկրորդ էջին վրայ տեղի նորո գրով. ՌԿԶ թվին տոց Յովանես կաղաղեկոս պուրբարի գիրք տան. Աբբ տան: Աբբ այ հոգու մէտար հաղորդ. յուշ անհաղորդ. տաւուլ տոյց պիւրլայ սիվ:

5. Թղ. 1ա. Բիւրիպոս կաթաղեկոս ա(ւ.)րհնութիւն

ին տոց ի թուրիանէն եալ մի զպլոց վիճակոց ձեռ- նագրեացն նգովեալ եղիցի ի կանս եւ ի մահ:

6. Թղ. 2ա. Սուրբ էջմիածին նվիրակի Խաչատուր վարդապետի պուրբարի Ա. աստաժ օլտակեաց խաղոր- ղալսայք ըլայ տակաբարի տոց հոգիմէր արան կազակի մահ յուլայ անհաղորդ տա կուլ Ուլանէս կաթաղեկոս տահի սլոյլայ տէտի թվին ՌԶԳ տոց էջմիածին նվի- րակի Մինաս վարդապետ անկարծակի մահ կալսոյ Գ. ըլայ տական հաղորդ տակ ու շոյլայ սիվ:

7. Թղ. 226ա. Ետեւի մաղաղաթեաց պահպանակ- ներուն վրայ, աւետարաններու գրութեան միջեւ, տեղի նորագրով. Ես էճի (հաճի՞ր) Մեղիկչաճ Մուրատ շա- լալին որդին ի թվականութեան Հայոց ՌԶԸ ունովա- րին ԻԸ տոց աւուրն աւրն Ուրբարու վասն մահուան իմոյ կտակ սահմանեցի աւուր կենդանութեան իմոյ բերանով իմով խաւեցայ եւ քահանայսն որդեցին ի հոյ- բարտութեան Տեառն Տէր Փիլիպոս կաղաղեկոսին սուրբ էջմիածնայ եւ ի պատրեաքութեան Տէր Զարա- րիկայ քաջ բարունայտեալսն Կոստանդնուպոլսոյ, ա- ռաջնորդութեամբ երուսաղէմոյ Տէր Գրիգոր արհիե- պիսկոպոսին եւ ի սեղապապահութեան մայրաքաղաքիս Տիրոյմայր սուրբ Աստուածածնի վանացն ծառայ ըստասուորին նուստ, Գարբէլ լրանն սահմանեցի ես սկեալ (°) ծերունի հաճի Մեղիկչայ որ ես մահուան իմոյ ով ոք ժառանկոր(դ) լինի ընչից իմոյ թէ տուն թէ ճանտարայ թէ յայդի ի յայտ ընչէս ես կղիական պա- հոյ քոստանս պատարազ կատարին հոգւոյ իմոյ հո- ղեւոր եւ մարմնաւոր ազգականաց իմոց տարին անգամ մի ես կատարման պատարազաց Բ. ոչխար զենցեն մասնակից լինել ժողովրդեան. փոխան արհնեցից սաղմոսին աստուած անեղ սասցեն հոգոց հանդուցե- րայ, աղաթք Գրիստոս որդի, Հայր մեր որ երկինս, ամեն տարեկից Զատիկ է, ի Զատիկ եկեղեցոյ մեկ այրեալ կուլ տան վասն Աստուծոյ մատաղին, զայս բանս կատարեն, որչափ ժառանկորդ կենդանի են որ- ղոց որդիս վկայ այսմ բանիս աչր Խաչայտուր, տէր Կիրակոս, տէր Գրիգոր, տէր Սփ (?) ամենայն քահա- նայք եւ ես նստարս պաշտօնեացս Գրիստոսի հաճի Մեղիկչաճ եւ խնդրանս լինի ձեզ ով քահանայք եւ պաշ- տօնեացք վրէժ ինդիր լինիս վասն կտակիս...: (Մնա- ցածն անկարեւոր եւ մասով մըն ալ գրիթե անը- բունի):



ՍԻՄԵՈՆ ԽՐԸՄՊԷՏԻ ՈՐԳԻ ԿԵՓԵՑԻ ՏԵՂԵԱՆՑ

Սիմէոնի կենսագրութեան քիչ բան ծա- նօթ է մեզի: Ծննդեամբ Կաֆացի էր, որդի Խրըմպէյի (Խրըմպէկի): Ապրած է Կաֆա քաղաքը. «Սիրուն է վարդը» տաղին վերջի տողը՝ «ձգէ կօշիկ կարեն» կը թելադրէ մեզի հետեւցնելու թէ անիկա կօշիկաւոր էր արու- ետով: Իր գործունէութեան շրջանը կ'իյնայ ժի. զարու երկրորդ կէսին. ունինք իրմէ տաղեր, որոնք գրուած են 1683, 1685 եւ 1686

տարիներուն: Իր մտերիմներու շրջանակին կը պատկանին Յարութիւն վաճառական, Յա- կոր Զահրնկալ եւ Սրապիոն, զոր եղբայր կ'անուանէ: Ողբը, զոր գրած է Սիմէոն Խա- սայէկ երէցի մահուան առթիւ, ենթադրել կու տայ, որ Սիմէոն Խասայէկի մտերիմ ծանօթ- ներէն, թերեւս նաեւ անոր աշակերտներէն եղած ըլլայ:

Սիմէոն երգած է զանազան տաղեր, պարզ, հաճելի ոճով եւ ժողովրդական նկա- րագրով: Անոնցմէ մին՝ «Խոսկական...», յօրե- նուած է սոյլ մը հայերէն եւ սոյլ մը թաթա- րերէն:

Կը բաւականանամ հոս թուել Սիմէոնի տաղերը, որքան ծանօթ են ինձ անոնք: Նկատի ունիմ զլուսաւորարար էջմիածնի թ. 1636 (ժի.ժԸ. դար) եւ թ. 2394 ձեռա- գիր Տաղարանները. վերջինս նոյն է Կոստա- նեանցի 1682 տարւոյ Տաղարանին հետ:

1. Նորին Սիմէոնի ասացեալ: Եկ պիւրպուրում զարնանային, ձայն աւետեաց բեր, բեր... Տունք՝ ԵՐԳ Ի ՍԻՄԵՈՆԷ: Ձեռ.՝ էջմ. 1636, 91բ—92բ: 2394, 211ա:
2. Ի վերայ մահուան խասպէկ ֆահաւայի, ասացեալ ի Սիմէոնի Խրմպէյ օղլը կո- չեցիլոյ: Եղև ահա այսօր ժամանակ ողբոց, Սուգ, արտմութիւն եհաս ամենայն տիւրոց... Կ. Խր թրվական Հայոց ըմա, ձէ եւ Լիւն Եւ Եշիւրն խառնեալ հոլովեալ ի ձեւ Եւ հուկ Գիւտի Խաչին վաղճանըն եղև. Շնորհեցէք Հայր մեղայն հոգուն իւր պարգև: Տունք՝ ԵՐԳԵԱԼ Ի ՍԻՄԵՈՆԷ: Ձեռագիր՝ էջմ. 1636, 102բ—104բ: Հրատ. Հանդ. Ամս., 1935, էջ 343—344:
3. Նորին Սիմէոնի այս: Իանց ցուրտ եւ ձմեռն եւ վիշտն աշխարհի, Զարեգակն եմուտ ամպրոպայն երկնի... Կ. ըմա, ձէ, Լիւն, Դայ է թիւ թրվականիս, Երբ յանդ երկալ եղև երգ Սիմէոնիս, Ի խնդրոյ Յարութիւն վաճառականի...: Տունք՝ է ՍՍ. ՍԻՄԵՈՆԷՍ: Ձեռագիր՝ էջմ. 1636, 98բ—101ա:
4. Անխրագիր: Ինձ ունին դիր աստանօր, բարբառիմ առ քեզ...

- վ. Խրըմպէյի որդի, մեղք ունիս անթիւ...: Տունք՝ Ի ՍԻՄԵՈՆԷ: Ձեռագիր՝ էջմ. 1636, 95ա—96ա:
5. Նորին Սիմէոնի ասացեալ: Խոսկական գերարուն լուսոյն անթարգման. Մատէրի խասիսէն եօխ սանկայ էխրան... Տունք՝ Ի ՍԻՄԵՈՆԷ: Ձեռագիր՝ էջմ. 1636, 89բ—91ա:
6. Խրմպէկի որդի Սիմէոնի առ Ս. Աս- տուածածին: Խորան լուսազարդ հայրական Բանին, Շրնորհօք լրցեալ փառակից Հոգին... Կ. Խր այս ժամանակս թիւ թրվականիս Տումարի մերում արամեան սեռիս, Ռ եւ ձ. Լ երկուս (1683), Որժամ անդ ելաւ երգ Սիմէոնիս: Տունք՝ ԽՐԸՄՊԷՏ ԱՒԳԼԸ ՍԻՄԵՈՆԷ ԲԷՎԵՑՈՅ ԵՐԳ Է: Ձեռագիր՝ էջմ. 1636, 85ա—89բ:
7. Տաղ ի խնդրոյ փոքրագոյն մանկան Յա- կոբայ Զախըկայի: Սէր քո ահեղ անտանելի Անկաւ ի սիրա իմ այսօր... Կ. Թիւն է Հայոց ՌձԼ եւ չորս աստանօր: Տունք՝ ՍԻՄԵՈՆԷ: Ձեռագիր՝ էջմ. 1636, 92բ—94ա:
8. Տաղ վասն ուրախութեան: Սիրով ուրախութեան ժամ է գիտացիր, ձեմելով եկ ինձ մօտեցիր... Կ. Խրըմպէյի որդի կոչեալ Սիմէոն...: Տունք՝ ՍԻՄԵՈՆԷ: Ձեռագիր՝ էջմ. 2394, 212ա (= Կոստա- նեանց, Տաղարան 1682). Կոստ. Տաղարան 1695ամին. Թերի: Հրատ.՝ Բաղմալէպ, 1884 էջ 34 (Թերի): Կոստանեանց, Նոր ժողովածու, Ա., '60—61 (Թերի, 1695ի Տաղարանէն եւ Նոր ժող., Գ., 54—56 (հմտ. էջ Ե):
9. Տաղ Սիմէոնի ասացեալ: Սիրուն է վարդըն ի մէջ ծաղկանցն ամենի... Կ. Խրըմպէյի որդի տե'ս ի՞նչ ասացաւ, Զբէ կօշիկ կարեն, ահա մահ հասաւ: Տունք՝ ՍԻՄԵՈՆԷ: Ձեռագիր՝ էջմ. 2394, 216բ—219բ: Պա- րիս Ա. Անտոնեանի սեպհական Տաղարան, թղ. 148ա (1695):

- 10. Անխորագիր: Սիրոս իմ ապաքինել բաղձամ ի սրբոյս... Զեռագիր՝ էջմ. 1636, 96ա—97ա:
- 11. Անխորագիր: Սպեղանի իմ խոցերոյս, բժիշկ եւ դեղ ցաւերոյս...
վ. Այլ եւ երգոյս խընդրողի եզբօրս իմ Սրապիոնի...: Տունք՝ ՍԻՄԷՈՆԻ Է ՍԱ: Զեռագիր՝ էջմ. 1636, 97բ—98բ:
- 12. Նորին Սիմէոնի ասացեալ է: Ստեղծողին հրամանաւն բանք անհամար յայտնելոց է... Տունք՝ ՍԻՄԷՈՆԻ Է ՍԱ: Զեռագիր՝ էջմ. 1636, 101ա—102ա:
- 13. Տաղ Ղարիպուքեան: Սրտիկս խոցեալ է սիրով, տէրտէր ունիմ շատ եւ յուրով. Տունք՝ ՍԻՄԷՈՆԻ: Զեռագիր՝ Քէչիշեան, Յուլիան Զմմատու վանաց, Թ. 338, 24բ (ԺԸ): Կոստանեանցի Տաղարան յամէ 1695: Հրտ.՝ Կոստանեանց՝ Մ. Նաղաշ, էջ 55: Տաղարան Կ. Պոլսոյ (անթուական), էջ 127: Չկայ որ եւ է ակնարկութիւն, թէ տաղս Խրըմպէյի որդւոյն ըլլայ. Կոստանեանց կը դրէ (անդ, 55 ծան.) «այս երգիչն է Սիմէոն Խրըմպէյի որդին»:
- 14. Անխորագիր: Սքանչելագործ անճառ արքայից արքայ. Զեմ արժանի կալ ի քո դիմաց հրաշալսործ: Տունք՝ ՍԻՄԷՈՆԻ: Զեռագիր՝ էջմ. 1636, 94ա—95ա:
- 15. Ոտանառք յընտրութիւնն եղիագար կաթողիկոսի: Տաղին սկիզբը կը պակսի.
վ. Յորեկանք թըւոյս Ի եւ երկրորդ լեալ, Կէս յորեկանօք եւ Զ թիւ ընդ այլ (ՌՃԼԱ).
Զ օգոստոսի ամսեանն երգեալ. Սիմէոնն յիմար, սուրբ էջմիածին... Տունք այժմ ||| ԸՄԵՅԻՈՅ, այսինքն՝ [Սիմէոնի Խր]ըմբեցւոյ: Զեռագիր՝ էջմ. 2394, 214ա—215ա (սկ. պակաս): Հմմտ. Կոստանեանց՝ Նոր Ժողովածու, Գ., էջ 6:
Կ'արժէր հաւաքել այս տաղերն եւ հրատարակել:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԵՓԵՑԻՈՅ ՈՂՐ Ի ՄԸՀՆ ԽՆՍՊԵԿ ՔԸՀԱՆԵՑԻ

ԴԱՐՁՆԱԼ Ի ՎԵՐԱՅ ԽԱՍՊԵԿ ՔԱՀԱՆԱՅԻ ՈՐ ՓՈԽԵՑԱԻ ԱՌ ՔՐԻՍՏՈՍ ԱՍԱՅԵԱԼ Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱՅԱՅԵՑԻՈՅ

Ի սուգ կոծոյ ողբոյ դառն աղէտագոյն. եւ ձայն լալեաց հեծեաց, յոր կայր սասուկագոյն
Հնչեաց յերկրէ մերմէ կըսկիմ ոյժգնագոյն. վասն մահուան մեծի առնն իմաստնոյն:

Ամենայն տեսակաւ զի վարդարեալ էր, 5
Հողոյ սրբոյ շնորհօքնն նա լըցեալ էր. Լըցեալ որակ որակ առատացեալ էր. եւ մերձեցեալն առ ինքն ոչ անտես առնէր:

Ունէր զբաննս ծածուկ ի խորին մըտաց, 10
եւ յայտնէր վարժապէս ակորժ տըզիտաց. Հարկիւ բացեայ առնէր ըզգին մարդարտաց, վաճառականն Խասպէկ՝ ցանկալին բազմաց:

Վարդապետաց յաւէտ նա էր խըրատիչ, 15
Ըստահակաց սաստօղ եւ միւրթարիչ. Իսկ հերձուածողացն էր պապանձեցուցիչ, Զեկեալս նոր յուզողութիւն՝ նոցա ընդունիչ:

Ասեմ զբանածին միտքն սըխրալոյն, 20
Գովեմ զերանաչնորհ ձեռքն ըղձալոյն. Զարմանամ ընդ բարբառ օրհնեալ բերանոյն, Գոհութիւն յարագուարճ վարդարողին զնոյն:

Նըման էր առաջնոց հարցն իրաւապէս, 25
Ընդ բընաւիւք ձեւովք անսըխալապէս. Քանդի զտարակուսանս ի զըրոց պէսպէս, Առ ժամայն լուծանէր նա տարագրապէս:

Նա որ ասաց Քրիստոս յաւետարանին 25
Յաղագս ընտրելոցն՝ աւուրքն կարճեցոյն, Եկեալ կատարեցաւ ի վերայ նորին, Զի վաթսուն եւ վեց էր երանելին:

Զեռագիր՝ էջմ. 1636, թղ. 104բ—106ա:
Ընթերցողներէ Զեռագիրն՝ Խորագիրը. ի վերա: — Ովաննի(ս)է:
1 սուք: — 3 հըչեաց... ոյգնագոյն: — 5 յամենայն: — 10 այսինքն: — 11 բացեալ: — 13 աւէտ: — 16 ուզողութիւն: — 21 յառաջնոց հարձն: — 22 ընդ(դ): — 25 աւետարանին:

Ի անեղ բանին հօր նա պիտոյացաւ,
30 վասն այնորիկ յերկրէ յերկինս կոչեցաւ. Զի ընդ քահանայից սըրբոց դասեցաւ, Ըսպասու գոլ փառաց Տեառն արժանացաւ:

Սորա հանդոյն այլուստ ոք ոչ գըրտանի,
Ի մէջ ըրարունեաց եւ մենաստանի. 35 Քանդի ամենեցուն նա էր պիտանի, Փիլիսոփայն ներհուն, քահանայն արի:

Եղեր այսօր գեր ի վերայ սրբութեան,
Շինեալ անուն կուսին Մօրն անապական. 40 Քեզ տայցեն երանի մինչեւ յաւիտեան, Թէ զըտցես զքեզ հովոզ, դու այլ նորա նման:

Եղեւ վաղճան մերոյ քաջ հոկտորին
Ի չըջանիս Հայոց ՌՃԻն. Ընդ իւր շարածաղձեալ երեսուն հընգին, Ամսեան հոկտեմբերի էր քսան եւ իննին:

Հրտ. Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ



ԲԵԼԳԻՐ ԵՒ ՀՅՅԵՐԸ

ՃԱ. ԳԼՈՒԽ

Լուվէնի երկու եկեղեցական հայագետները, Լըբօն Եւ Մէօյլէրմանս: Նրանց աշխատութիւններն ցուցակն եւ բովանդակութիւնը: Բրիւքսէլի արքայական մատենադարանի հայ գրչագիրներն եւ պարսկերէն Աւետարանը:

Լուվէնի (Louvain) քաղաքը Բելգիայում այն դերն է կատարում ինչ որ Լէյդէնը Հոլլանդայում, այսինքն գրեւ զարոցական, համարարանական քաղաք է, ուր ամէն ինչ յիշեցնում է ուսում եւ կրթութիւն: Բազմաթիւ են այստեղ գիտութեան նուիրուած անձեր, գրեթէ բացառաբար եկեղեցական դասակարգից: Այս շարքում ունինք նաեւ երկու Հայագետ, M. le Chanoine Lebon եւ M. l'abbé J. Muyldermans: — Առաջինը, Լըբօն, համարարանի մաս կազմող Collège du Saint Esprit զպրոցի նախագահն է եւ համարարանի Աստուածաբանութեան ուսուցչապետը: Եր-

30 յերկր: — 39 մին աւիտեան: — 43 շարածաղձեալ:

կրօնը, Ժ. Մէօյլէրմանս, որ աւելի երիտասարդ է, նոյնպէս կրօնուսոյց է, բայց նոյն եռանդով զբաղուած է բանասիրական եւ մատենագրական աշխատութիւններով: Տ. Լըբօն՝ Լուվէնի համալսարանում ստանձնած է Հայերէնի դասը: Այս դասախօսութիւնը համարարանի ծրագրի մէջ մտել է 1920ից սկսած. դասընթացը երկամեայ է եւ ունի ազատ ունկնդիրներ, այն ուսանողներից — բոլորն էլ Բելգիացի եւ օտար — որոնք կրօնագիտութեան են հետեւում: Այս ուսանողների Հայերէն սովորելու նպատակը քրիստոնէական հին մատենագրութեան հետազոտութիւնն է, որի մէջ Հայկական հին թարգմանութիւնները աննշան սեղ չեն գըրաւում:

Լուվէնի համալսարանն ունի իր յատուկ պարբերական հրատարակութիւնը՝ Le Musée, Revue des Etudes Orientales, կոչմամբ, 1882ից սկսած, ուր, զլիաւորաբար, տպւում են համալսարանի ուսուցչապետների, ինչպէս նաեւ կողմակի գիտնականների ուսումնասիրութիւնները:

Լըբօնի Հայագիտական աշխատութիւններն, որոնք մինչեւ հիմայ լոյս են տեսած, հետեւեալներն են.

1. Version arménienne et version syriaque de Timothée Elure, այս երկու լեզուով կատարուած հին թարգմանութեան հմտալոյ բաղդատութիւնը. տպուած է «Հանդէս Ամսօրեայ»ում, 1927, էջ 713—722:

2. Les citations patristiques grecques du «Sceau de la Foi». Մա մի ընդարձակ ուսումնասիրութիւն է հանդ. Կարապետ եպ. Տէր Մկրտչեանի «Կնիք Հաւատոյ» հաւաքածոյի վրայ (էջմիածին 1914, Յառաջարան եւ 436 էջ): Տ. Լըբօն քննում է այս առթիւ այս հարցի վրայ գրուած բոլոր այլ հրատարակութիւնները, զնահատում է հայ եպիսկոպոսի աշխատութիւնը: Տպուած է՝ Revue d'histoire ecclésiastique, 1929, t. XXV, էջ 1—32:

3. Notice sur un manuscrit arménien de la Bibliothèque de l'Université de Louvain. Համարարանն այս մի միակ Հայերէն ձեռագիրն ունի, որ Շարական է, թուղթ, 325 թերթից բաղկացած, բոլորգիր, ԺԷ. դարից: Ընդօրինակողն իր մասին գրում է. «սկսեալս իմ դու հան յաւարտ» եւ ապա «զտէր Մարգարոյ գծողս յիշել ի տէր աղաչեմ զձեզ»: Տ. Լըբօն այս գըրչագիրը համեմատում է էջմիածնի մի Շարականի եւ Վիեննայի 202 թիւի հետ, ըստ Տաշեան Յուլիանի (էջ 523—525):